

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ամեն ազգի կուլտուրական անցեալը արտափայլում է նորա-
տանդութիւններում, հաւատալիքում, սովորութիւններում, նիստ
ու կացում, միով բանիւ՝ նորա ամբողջ կենցաղում, ժողովրդի
դիւցազնական զրոյցների մէջ փառաւորում է նորա նախնեաց
համբաւը, նախապաշարմունքների և դիցաբանական երգերի մէջ՝
զրոշմուած են նորա հեթանոս կրօնի, հինաւուրց աշխարհայեցո-
ղութեան հետքերը: Ահաւաստիկ այս տեսակէտով ժողովուրդը իւր
ամբողջ էութեամբ հանդիսանում է առատ ազգիւր իմաստասէր
պատմագրի համար, որ՝ խնամքով մշակելով և ուսումնասիրելով
հաւաքած բազմակողմանի նիւթը՝ նորանից թանգազին պաշար
կթաղէր իւր զործի համար, նորա շնորհիւ լուսաբանելով ազգի
անցեալի մթին էջերը: Դիցաբանական և դիւցազնական առաս-
պելները կ'զարդարեն ամեն ազգի փառաւոր ծնունդը և նորա
մանկութեան օրերը. բնական է, որ այս պատրաստի բանաւոր-
աղբիւրներին դիմել են հնագոյն կուլտուրական ազգերի՝ եբրայե-
ցոց, յունաց, հռովմէացոց՝ պատմիչները, ծերերի զրոյցներից
դարձնելով ալևոր հնութեան հերոսներին և նոցա սքանչելի շա-
հադրածութիւնները. աստուածաշնչի առասպելները, Հերոդոտի կամ
Լիբրիոսի զրոյցները իրանց հնագոյն մասերում թնչ են, եթէ ոչ
միամիտ ժողովրդի դարաւոր հոգևոր զարգացման, մտաւոր աշ-
խարհայեցողութեան արգասիքը, որ կենդանանում է նորա խօս-
քի մէջ, թեւեր առնում, ազնւանում, կոկուում, զարդարւում գու-
սանների ոգելից երգերի մէջ: Նոյն ազգային պարծանքը զրդել
է և հայ մատենագրերին ուշի ուշով ականջ դնել ժողովրդի ա-
ւանդութեանց՝ Հայկ, Արամի, Տիգրանի և այլ դիւցազանց՝ մեծա-
նուն գործերում որոնելով նախնեաց փայլուն համբաւը: Սոքա-
նն եղել առաջին բանահաւաքները, որոնք հիմք են դրել ազգա-
գրութեան, կենդանի աղբիւրից հիւսելով իրանց պատմութեան
թելը:

1) Մանրամասնօրէն խնդրիս մասին տես իմ տակաւին շա-
ւարտած ուսումնասիրութիւնս՝ «էին Հայոց վէպերը և Մովսէս-
Խորենացին» Հանդէս Ամսօրեայ 1904.

Հարկաւ մենք այստեղ գործ չունինք փաստերի հետ, ինչպէս մաթեմատիքական գիտութիւններում. իզուր կլինէր ամեն մի առասպելում որոնել որ և է եղելութիւն. պատմական անցքեր՝ անգամ աշխարհահռչակ, դարերի ընթացքում այն աստիճան աղաւաղում են ժողովրդի բերնում, որ նոյն իսկ ամենասրամիտ քննադատը շատ անգամ կ'դժուարանար բուն սերմն գտնել նորա վերայ կուտակուած բազմաթիւ օտարոտի շերտերից. պատմական նոր հերոսներ ստէպ զարդարւում են հնրի դափնիներով և հակառակն. գիւցազանց բարոյական տիպարը այլայլւում է, մերթ աստուածանում, մերթ նսեմանում և մթնում. օտարազգի թագաւիրներ և հռչակուած քաջիւր մտնում են ազգային ջոջերի տաճարը:

Սակայն եթէ պատմութիւնն ըմբռնենք ոչ իբրև չոր ու ցամաք անցքերի շարք, այլ իբրև ազգերի հոգևոր գործունէութեան, կուլտուրական զարգացման հաւատարիմ հայելի, այն ժամանակ ժողովրդի կենդանի վկայութիւնն նորա լեզոււմ, աւանդութիւններում, սովորութիւններում, վարքուբարքում անշուշտ թանգազին պաշար կ'մատակարարէր հանճարեղ պատմագրին, որ՝ կապելով ներկան հնութեան հետ և դատելով օտար սերմն հարազատից՝ կվերականգնէր և կըկենդանացնէր ազգի հեռուոր անցեալի պատկերը: Հեթանոս կրօնի հետքեր ցարդ նկատելի են ազգերի զրոյցների, անէծքների, օրհնէնքների, խաղերի, ծէսերի, եկեղեցական պաշտամունքի և նախապաշարմունքի մէջ. ժողովրդի լեզուն, օրին. մեղանում, իւր ճոխ գաւառաբարբառներով հանդերձ կարող էր իւր տակաւին պահպանուած դոհարներով գէթ մասամբ լրացնել այն պակասը, որ զգալի է մեր մատենագրերի մօտ, որոց լեզուն՝ հեղեղուած օտարոտի բառերով՝ յամենայն դէպս չէ ներկայացնում մեր նախնեաց ամբողջ բանաւոր գանձը:

Հասկանալի է ուրեմն ազգազրութեան լուրջ նշանակութիւնն ազգերի կուլտուրական պատմութեան համար, իբրև նորա անհրաժեշտ ազդիւրներից մէկը:

Այն ժամանակից, երբ ժողովրդական տարրը արևմտքում երկարատև արիւնահեղ կռիւներից յետոյ տարաւ յազթանակը և մտաւ ազատ քաղաքացիների շարքը, նա՛ իբրև մի նոր խոշոր պատմական երևոյթ, հասարակական կեանքի նոր գործօն՝ եղաւ կարևոր առարկայ գիտութեան և դրահանութեան համար. այն, ինչ որ դարերի ընթացքում արհամարուած էր և անտեղի դատապարտուած, իբրև լուրջ ուսումնասիրութեան, նոյն իսկ հետաքրքրութեան անարժան նիւթ, սկսուեց ժողովուել մեծ խնամքով և անսպառ եռանդով նախ Գերմանիայիում (եղբայրք Գրիմներ) և ապա Ռուսաստանում (Афанасьевъ, Кирѣевскій, Рынинговъ, Гильфер-

ԱՌԻԵՆ)։ ԸՆԴՈՐ լուսաւոր ազգերի մօտ հիմնուեցան ազգադրական ընկերութիւններ և միաժամանակ պարբերական հանդէսներ, որոնք իրանց նպատակ դրին՝ մասնագիտօրէն ուսումնասիրել ժողովրդական կեանքը իւր բազմակողմանի ամբողջութեամբ։ Երկրազնդիս զանազան ազգեր՝ քաղաքակիրթ և վայրենի՝ ցուցահանդէս դրուեցան առանձնապէս իրանց յատկացրած մուզէյօններում՝ իրանց տեղական զգեստներով, տան պարագաններով, զէնքերով, արհեստների գործիքներով։ Ռամիկ ժողովուրդը իւր վշտերով և հոգսերով, անհոգ զուարթութեամբ, կրքերով, հասարակ հոգեբանութեամբ, ազգային զարդարանքներով պատճառուած և կամ ցընցոտիներով պատած, ազմկալի, խոռնիխուռն երևան եկաւ բեմի վերայ և պատուաւոր տեղ բռնեց քանքարաւոր գրիչների բոմաններում։

Բնական է, որ զբաղանութեան այս նոր ընթացքը պէտք է գրաւէր նաև հայերի ուշադրութիւնը, որոց լուսաւոր ներկայացուցիչները՝ միլրտուած եւրոպական գիտութեան աւազանում՝ ըստ մեծ մասին ժողովրդի միջից էին դուրս եկել և մօտ ծանօթ էին նորա կենցաղի հետ։ Արտվեանի անմահ՝ «Վէրք Հայաստանին» հիմք դրեց ոչ միայն հայ նոր զբաղանութեանն, այլ և հայ ազգագրութեանն, տալով մի շարք փայլուն նկարագրութիւններ գիւղական կեանքից։ Պոռչեանի «Սօս և Վարթիթերը», «Հացի խնդիրը» և այլ երկերը՝ իբրև տաղանդաւոր նկարչի վրձինի տակից դուրս ելած պատկերներ՝ միանգամից հրապուրեցին իրանց բնականութեամբ, կենդանութեամբ և գեղարուեստական նրբութեամբ հայ ընթերցող հասարակութիւնը։ Միաժամանակ զանազան պարբերական հրատարակութիւններում սկսեցին երևալ ինչ ինչ ժողովուրդական բանահիւսութիւններ և հատուկտոր տեղեկութիւններ գիւղական ազգաբնակչութեան մասին (Բազմավէպ, Արծուի Վասպուրական, Կոռնիկ, Արևելեան Մամուլ, Արարատ)։ Սակայն այս բոլորը դեռ միայն պատահական, քիչ շատ աջող փորձեր էին, առանց որ և է սիստեմայի, կապի և բանահաւաքի հմտութեան. արժ. Հ. Գարեգին Սրուանձտեանցի զբաղանական հանդէս զալովն հայ ազգագրութիւնը միանգամից ստացաւ նոր համ ու հոտ և առաջին անգամ ղըրուեցաւ զբաղան հողի վերայ. բուրեց Տանկահայաստանի լեռներից և հովիտներից, երևան եկաւ հայ գիւղը իւր գետնափոր խրճիթներով, խոտի և աթարի զէզերով, նեղ և ծուռ անցքերով, տան անպաճոյճ կահ կարասիքով, վարուցանքի գործիքով, մանր և խոշոր խաշինքով. շնորհալի հօր կոկուն, զոդարեկ զրչի տակից կենդանացաւ հայ գիւղացին իւր

դաշտային պարապմունքներով, ընտանեկան կենցաղով, երգերով, մասալներով¹⁾։

Հ. Գ. Մրուանձտեանցի տոկուն գործունէութիւնն արժնացրեց մեզանում սէր և հետաքրքրութիւն դէպի գիւղական կեանքը իւր գաւառական գրաւիչ պէսպէսութիւններով. դա գործի սկիզբն էր, աջող սկիզբը, կարճ միջոցում բանահաւաքների թիւը բազմացաւ, որոնք օրինակելի ջանասիրութեամբ և որ գլխաւորն է՝ սխտեմաբար սկսեցին ուսումնասիրել Հայաստանի զանազան գաւառները և հաւաքել ժողովրդական բանահիւսութեան փշրանքները, յիշելու է Շերենցի «Վանայ սաղը» (Թիֆլիս 1885), Տ. Նաւասարդեանի հայ հեքեաթների հարուստ ժողովածուն, Մ. Արեղեանի «Դաւիթ և Մհերը» (Շուշի 1889), արժ. Գարեգին սարկ. Յովսէփեանի «Մասմայ ծոբը» (1892), Ե. Լաւայեանի «Ջաւախքի բուրմունքը» (1892), իմ «Թըլօր Դաւիթ և Մհերը» (Վաղարշապատ 1899), Գ. Ախվերդեանի «Հայ աշուղները» (Թիֆլիս 1903)²⁾։ Աղբիւրը շատ առատ կ'ոսէր և օրըստօրէ կարևորութիւն էր զգացուում՝ ամփոփել ճոխ նիւթը որ և է մասնագէտ հանդիսում. պարզ է, որ Ե. Լաւայեանի նախածնունդութեամբ և խմբագրութեամբ «Ազգազրական Հանդիսի» ասպարէզ դալն ժամանակի հասուն պահանջներից մէկն էր. իւր տասնեամեակի շրջանում մինչև օրս (1896—1906) «Հանդէսը»... կշարունակէ լոյս հանել առատ և բազմակողմանի տեղեկութիւններ Անդրկովկասի և Տաճկահայաստանի հայ ազգաբնակչութեան տընտեսական վիճակի, աւօրեայ պարապմունքների, բարքերի, և հաւատալիքի մասին. առանձին ուշագրութեան արժանի են հետեւեալ յօդուածները՝ Ե. Լաւայեանի տակաւին շաւարտած «Ջաւախքը» (գիրք Ա. Բ Գ.), «Դանձակի գաւառը» (գ. Ե. Զ. Է. Ը.), «Բորչալուի գաւառը» (գ. Է. Ը. Թ. Ժ. ԺԱ.), Յ. Մուրադեանի «Համալէնցի Հայերը» (գ. Դ. Ե. Զ.), Գարեգին վարդապետ Յովսէփեանի «Ռոստամ Զալը» (գ. Է. Ը.). Հրատարակութիւնը պատկերազարդ է. յօդուածների ծրագիրը բաւական հարուստ է և ասպացուցանում բանահաւաքի սէրը և հմտութիւնը. օրինակի հա-

1) Վաղուց կարիք է զգացուում մեզանում վերստին հրատարակելու Հ. Գ. Մրուանձտեանցի սպառուած երկերը՝ Համով-Հոտով, Գրոց-Բրոց, Թովմաս Աղբար և այլն։

2) Օտարազգի լեզուներով լոյս տեսած հրատարակութիւններից և ուսումնասիրութիւններից նկատելի Արշակ Չոպանեանի «Chants populaires armeniens» Paris 1902, Մ. Արեղեանի «Der armenische Volksglaube» Leipzig 1898, իմ «Die armenische Heldensage» Berlin 1902, ևս «Die iranische Heldensage bei den Armeniern» Berlin 1903 (Zeitschrift des vereins für volkskunde).

մար վեր առնենք Ս. Լալայեանի Բորչալուի գաւառի նկարագրութիւնն. պատմական և քաղաքական տեսութիւնից յետոյ հեղինակը թոււմ է հայ գիւղերը, հայոց և վրաց վանքերը, ապա մանրամասնօրէն նկարագրում է հայ ազգարնակութեան ընակարանը, զգեստը, ամուսնութեան, հարսանեաց և կնուների սովորութիւնները, յիշում է մի առ մի ժողովրդից գործածելի կերակուրները, երկար կանգ է առնում հաւատալիքի վերայ (լիւնների, քարերի, ջրի, կրակի, ծառերի, կենդանիների, չար և բարի ոգիների պաշտամունք, սրբեր, ուխտադնացութիւն, կախարդութիւն, սնտոխպաշտութիւններ և այլն), առաջ է բերում տեղական երգերի տեսակները (մանկական, սիրոյ, վիճակի, ընտանեկան, պանդխտութեան, երկրագործի, երգիծական, աշուղական երգեր, անէծքներ, երգումներ, հանելուկներ և այլն). Ընչ շուայ նիւթ ուսումնասիրութեան համար: Ջրոյցներ, դիւցազնական աւանդութիւններ սակաւ են երևում Ազգ. Հանդիսի էջերում, և գուցէ այս է նորա պակասութիւնն¹):

1901 թւից սկսուեց հրատարակուել Մոսկուայում «Էմինեան Ազգագրական Ժողովածուն»։ մինչև այժմ լոյս են տեսել հինգ հատոր հետևեալ բովանդակութեամբ՝ գիրք Ա. Փշրանքներ Շիրակայ ամբարներից (հէքեաթ, առակ, հաւատք, կենցաղ, սովորոյթներ), Բ. Ժողովրդական վէպ և հէքեաթ (տաճկահայ գաւառական բարբառներով), Գ. Թուրքերէնի ազգեցութիւնը հայերէնի վրայ, Դ. Ժողովրդական հէքեաթ և երկու եղանակ «Դաւիթ և Մհեր» ժողովրդ. վէպի: Հինգերորդ հատորը²) կրում է «Հայքրդական վէպ» վերնազիրը, թէև առաջին էջերը բռնում են իրանական վէպի հինգ ընդարձակ վարիանտներ՝ Ռօստամ-Չալ, Ռօստամ և Ատամբօի և Դիւրօ, Ըօստամի Չալ Բէճան, Սամ (Մոկաց և Արծկէի բարբառներով). ապա հետևում են հայքրդական զրոյցներ, որոնցից 13 ունին քրդական՝ հայերէն թարգմանութեամբ հանդերձ՝ երգեր (ձայնագրուած արժ. Հ. Կոմիտասի աշխատութեամբ և զետեղուած զրքի վերջում): Խմբագրութիւնը կարևոր է համարել իւր կողմից մի քանի սողով (հայերէն և ռուսերէն լեզուներով) բացատրել նիւթիս նշանակութիւնն համեմատական ուսումնասիրութեան համար, յիշելով Վսեվոլոզ

¹) Տեղի սղութիւնն է եղել պատճառ. այսուհետև միջոց կուենանք հրատարակելու կուտակուած նիւթերը: Խմբ.

²) Էմինեան Ազգագրական Ժողովածու, հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց, հատոր Ս. Հայքրդական վէպ, հեւաքեց Ս. Հայկունի, Մոսկուա—Վաղարշապատ 1904 էջ VII—304.

Միլլերի աշխատութիւնը (Экскурсы въ область русскаго народнаго эпоса. Приложение: отголоски иранскихъ сказаній на Кавказѣ стр. 87—89, Москва 1892) և Ա. Սոցինի քրդական աւանդութեանց ժողովածուն (Kurdische Sammlungen, Erzählungen und Zieder im Dialekte von Bohtan, gesammelt, herausgegeben und übersetzt von A. Socin, S. Petersbrg, 1890). Անհասկանալի է թէ ինչու յարգելի խմբագրութիւնը կարևոր չէ համարել յիշել նախ քան Ս. Հայկունու ներկայ ժողովածուն մեզանում լոյս տեսած նոյն բովանդակութեամբ հաւաքածուներ. կարծեմ, նորան պէտք է ծանօթ լինէին իմ «Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ» (Պարխ 1901) գրի աւանուած եղանակները, որոնք նախ հրատարակուեցան ուսուիրէն լեզուով Этнографическое Обозрѣніе հանդիսի մէջ (Մոսկուա 1899) և ապա գերմաներէն թարգմանութեամբ «Die iranische Heldensage bei den Armeniern» վերնագրով Zeitschrift des Verlins für Volkskunde, Heft 1. 3. 4. Berlin 1904, 2 է յիշուած նաև արժ. Գարեգին վարդապետ Յովսէփեանի Ռուսամբալ աշխատութիւնը (Ազգագրական Հանդէս, վեցերորդ տարի, VII և VIII գրքեր, էջ 205—258):

Բացի այս թերութիւնից ժողովածուն ներկայացնում է ընթերցողի համար մի շատ անախորժ անյարմարութիւն. Ս. Հայկունին ընդգծել է իւր հաւաքածուի մէջ ամեն քայլափոխում պատահող օտարազգի (պարսիկերէն և տանկերէն) բառեր, միանգամայն մոռանալով թարգմանաբար տալ նոցա հայերէն նշանակութիւն. իրաւ է, սոցանից շատերը մեզանում վաղուց ընտելացել են և միանգամայն մատչելի են ընթերցողին, օրին. զենիլ, աղա, մաղարալ, ջուաբ, պաղչալ, ջանդակ, խանչալ, դարդ, սագ մէղան. սակայն ահագին քանակութեամբ բառեր, ինչպէս օրին. հարափար, դասամբ (էջ 9), պուղա անել (9) նիւաղու (10), հանալա (20), յալասար (22) բեարօ (28), հուլփար, մազպարա, դանմիւ անել (26), սուրկուն (27) դայաղ (31), հալաբ (32) դայիլ (39), վարամ (37), ալասա (41), մեփեան (56), մալհագա (80), խիկ, հիկեմամայ (81), պալալիկ, մրմբարաբ, բասպիւր (216), բալաջ (286) և այլն և այլն միայն ժողովրդական բարբառների քաջ մասնագէտների կարող են ծանօթ լինել. գրքին կցելու էր բառարան: Յուսալու է, որ այս թերութիւնը այլ ևս չի կրկնէ ոչ բանահաւաքը և ոչ խմբագրութիւնը, որպէս զի ընթերցողը կարողանայ հասկանալ իւր կարգացածը:

Բրդական երգերի թարգմանութիւնն միշտ էլ աջող չէ. կան աչքի ընկնող սխալներ, օր Էգիւ աշրխա Հայկունին թարգմանում

է շերկու երգիչ» (էջ 71), մինչ ասելը բառը այստեղ գործ է ած-
 ւած իւր բուն նշանակութեամբ «սիրահար» (բառս արարերէն է):

Ներկայ հատորին նիւթը հետաքրքրական է, իբրև քուրդ
 բանահիւսութեան ընտիր նմոյշներ. հրաշալի է Լէյլի-Մէջլում
 սիրահարական երգը (էջ 71—75). Մէջլումին գիշերները հանգիստ
 չէ տալիս: «Գրախոտի հուրին», երևալով նորան երազում. մայրը
 գնում է Ջղրիի շուկան հարցուփորց անելու իւր որդու սիրուհու
 մասին.

Սո տեսայ իմ Լէյլա վերեկն կը շորորար կը գար,
 Մածնի տիկը (որ էք) շալակը,
 Եկաւ Ջղրի որ զուարճանայ:

Մայրը վերադառնում է և պատմում որդուն, որ նորա սի-
 րուհին ամենաազեղ և այլանդակ արարածն է. Մէջլում յանդիմա-
 նում է մօրը, վեր առնում իւր դամբուրան և գնում Մնճանի աղ-
 բիւրի տիկան վերայ, որտեղ պատահում է Լէյլիին.

Սո տեսայ իմ Լէյլա վերեկն շորորար, կգար,
 Ջրի տիկը շալակը եկաւ Մնճանի աղբիւրի վերայ զը-
 ւարճանալու.

—Այ Մէջլում, բարև քեզ,

—Աստուծոյ բարին, աչքերուս վրայ, սրտի սիրական
 Լէյլա.

Եօթն օր եօթը գիշեր ոտի վերայ կանգնեցան,

Դարձեալ կը կարծէին, թէ նոր կանգնած են:

Աղջիկը խնդրում է Մէջլումից՝ թոյլ տալ նորան ջուր տա-
 նել իւր հօր հիւրին, խոստանալով հետեւեալ առաւօտ լինել միև-
 նոյն տեղում. տուն վերադառնալով նա չէ գտնում իւր հօր
 վրանները և գնում հասնում է կարաւանին:

Դնաց ձմեռ, եկաւ գարուն

Իմ վրայ բարով գայ ապրիլ ամիս.

Լէյլիի հայրը դարձեալ քոչում է ամառանոց. աղջիկը յի-
 շում է Մէջլումին և հարցուփորց անում վերևում սաւառնող
 թռչունից, արդեօք նա չէ տեսել Դերկուլայի Մնճանի աղբիւրի
 մօտ մարդու դիակ. թռչունը վայր է իջնում և պատասխանում.

Սո մարդու դիակ տեսայ,

Սո միսը կերած եմ, ոսկերքը ժողոված եմ,

Բոյնս մէջը շինած եմ,

Չազուկներս թուլցած եմ:

Լէյլին մօր հետ գնում են Մնճանի աղբիւրը, հաւաքում
 Մէջլումի ոսկերքը, հաստատելով յօղումած յօղումածի վերայ, և ա-
 ղօթքով դիմում Աստուծու: Աստուած երկու սիրահարներին անում

է աստղ և հաստատում երկնքի վերայ, Լէյլիին՝ հարաւ, Մէջու-
մին՝ հիւսիս:

Այս զրոյցը տարածուած է և հայ ժողովրդի մէջ (տես Ազգ.
Հանդէս գ. IX «Պատուաւորունչ» էջ 270). սկզբնական խմբագրու-
թիւնն ես համարում եմ՝ համաձայն պրոֆ. Chauvin-ի կարծիքի՝
արարական (տ. իմ «Die Kurdischen Sagen» Zeitschr. d. v. für
volkskunde, Berlin, 1905).

Գեղեցիկ է նաև Մամօ և Զինէ սիրահարական միջադէպը
(երկու եղանակ, մէկը ամբողջապէս երգ է), որ երիտասարդ
զոյգի ողբերգալի մահուամբ է վերջանում (համեմատիր «Մամօ և
Զինէ» Ազգ. Հանդէս 197—240), գեղարուեստական ճաշակից զուրկ
չէ «Սևահաջէն», բուն քրդական աղբիւրից է բղխում «Համուտէ
Շանկէ» դիւցազնական ականդութիւնն (գաւաճանութեամբ սպան-
ւած հերոսի կիներ լուծում է իւր ամուսնու մահուան վրէժը թըշ-
նամուց, նախ խմելով նորա վէրքի արիւնից և ապա հրամայելով
նորան ողջանգամ այրել). համեմատաբար թոյլ պատմուածքներ
են Սիլյամանտ և Սիլյարէնտօ և Խաճէ Զէռին (յայտնի քրդական
վէպի հեքեաթաձև եղանակներ, հմմտ. Հ. Սրուանձտեանցի «Սի-
լյամանտօ կամ Սարէ-Սիփանէ»): Մնացած նիւթը ներկայացնում
է կամ տեղական զրոյցներ, օր. Գուլլըք ու Կեստօ, Զոմար բէկ,
Հայդարցի Ալի, և կամ արևելքում տարածուած հեքեաթների քըբ-
դական եղանակներ, օր. Ղանտիլի Սիափուշ և Հեօղբէկ, Դալու
Համդա, Աբարալաք, Նաչար Օղլի (մութ աշխարհի հէքեաթը).
իբրև յաւելուած ժողովածուին կցած է Յուսեփ ու Զալեխ (Յով-
սէփ գեղեցիկ) հայ վարիանտը:

Սպասելու է, որ էմինեան Ազգագրական ժողովածուն կը-
շարունակէ նոյն բազմակողմանի ծրագրով լոյս ածել հայ ազգա-
գրական նիւթեր, որոնց նշանակութիւնն ազգիս կուլտուրական
պատմութեան համար անդին է:

Ինչպէս տեսնում ենք, հայ ազգագրութիւնը, չնայելով որ
զեռ նոր է ծաղկել մեզանում, արդէն անագին առաջադիմութիւն
է արել, մատակարարելով ժողովրդական բանահիւտութեան մաս-
նագէտներին ճոխ և հետաքրքրական նիւթ ուսումնասիրութեան
համար, որի կարևորութիւնն մեզանում շատ զգալի է:

ԲԱԳՐԱՏ ԽԱՍԹԵԱՆ